## ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N ՀՀԿԳՄՍՆԳՀԾՁԲ-20/160-Հ1

## 16.09.2020Թ ԿՆՔՎԱԾ ԹԻՎ ՀՀԿԳՄՍՆԳՀԾՁԲ-20/160 ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ք. Երևան «22» «04» 2021 թ.

Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունը, ի դեմս գլխավոր քարտուղարի տեղակալ՝ Վահրամ Գասպարյանի, որը գործում է նախարարության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու) մի կողմից, և «Ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային համալսարան» հիմնադրամը, ի դեմս ռեկտոր Ե. Վարդանյանի, որը գործում է Հիմնադրամի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կապալառու), մյուս կողմից, հիմք ընդունելով 2020թ սեպտեմբերի 16-ին կնքված N ՀՀԿԳՄՍՆԳՀԾՁԲ-20/160 գլխավոր գնման պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) 7.5 և 7.13 կետերը կնքեցին սույն համաձայնագիրը հետևյալի մասին.

### 1. ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Առաջնորդվելով ՀՀ կառավարության 18.03.21թ թիվ 353-Ն որոշմամբ՝ Կողմերը փոխադարձ համաձայնությամբ որոշեցին գլխավոր Պայմանագրում կատարել հետևյալ փոփոխությունները.

1.1.1 Հաստատել Պայմանագրով սահմանված 2021թ համար ծառայությունների մատուցման նոր Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցը համաձայն թիվ 1 հավելվածի:

1.1.2 Հաստատել Պայմանագրով նախատեսված 2021թ մատուցվող ծառայությունների համար վճարման նոր ժամանակացույցը համաձայն թիվ 2 հավելվածի:

### 2. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

2.1 Սույն համաձայնագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև պարտավորությունների լրիվ կատարումը:

2.2 Սույն համաձայնագրում չնշված Պայմանագրով ստանձնած Կողմերի իրավունքներն ու պարտականությունները, աշխատանքի հանձնման-ընդունման հետ կապված և այլ հարաբերությունները թողնվում են անփոփոխ:

2.3 Սույն համաձայնագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

2.4 Սույն համաձայնագիրը հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը, կազմված է 1 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Սույն համաձայնագրի թիվ 1 և 2 հավելվածները համարվում են համաձայնագրի անբաժանելի մասը:

### 3. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

| ՊԱՏՎԻՐԱՏՈՒ | ԿԱՊԱԼԱՌՈՒ |
|---|---|
| ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն | «Ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային համալսարան» հիմնադրամ |
| Ք. Երևան, Կառավարական տուն 2 | Ք. Երևան, Տերյան 105 |
| ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն | ՀՎՀՀ 01506385 |
| Հ/Հ 900011033686 | <<Արարատբանկ>> ԲԲԸ |
| ՀՎՀՀ 02698732 | Հ/Հ 1510001964940200 |
| Գլխավոր քարտուղարի տեղակալ՝ | Ռեկտոր՝ |
| ---------------------- Վ. Գասպարյան | ---------------------- Ե. Վարդանյան |
| /ստորագրություն/ Կ.Տ | /ստորագրություն/ Կ.Տ |

*Հավելված N 1*
*«22» 04 2021թ. կնքված*
*ՀՀԿԳՄՍՆԳՀԾՁԲ-20/160-Հ1 ծածկագրով համաձայնագրի*

## ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

| Ծառայության | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| հրավերով նախատեսված չափաբաժնի համարը | գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | Անվանումը | տեխնիկական բնութագիրը | չափման միավորը | ենթակա է գնման: 2021 թ. Համապատասխան ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում — ընդհանուր քանակը | ենթակա է գնման: 2021 թ. Համապատասխան ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում — ընդհանուր գինը | մատուցման — հասցեն | մատուցման — ժամկետը** |
| 1 | 71351540-4 | Տեխնիկական հսկողության ծառայություններ | Գնման առարկա է հանդիսանում ՀՀ Սյունիքի մարզի Բնունիս համայնքի Սբ Աստվածածին եկեղեցու /19-րդ դար/ վերականգնման և մասնակի բարեկարգման աշխատանքների որակի տեխնիկական հսկողության ծառայությունների ձեռքբերումը | դրամ | 1 | 88692 | ՀՀ Սյունիքի մարզ, Բնունիս համայնք, Սբ Աստվածածին եկեղեցի | Ծառայության մատուցումը սկսվում է համաձայնագիրն ուժի մեջ մտնելու օրվանից և իրականացվում է ՀՀ Սյունիքի մարզի Բնունիս համայնքի Սբ Աստվածածին եկեղեցու վերականգնման և մասնակի բարեկարգման աշխատանքներին զուգահեռ |

**Տեխնիկական առաջադրանք**

Նախատեսվում է.
- Վերականգնողական և դրանց առնչվող շինարական աշխատանքներ իրականացնող կազմակերպության կողմից Պատվիրատուին աշխատանքները հանձնելու վերաբերյալ համապատասխան ակտերի և արձանագրությունների ստուգում, կազմում, ստորագրում:
- Վերականգնողական և դրանց առնչվող շինարական աշխատանքների ավարտից հետո Ծառայության մատուցման հանձնման-ընդունման արձանագրության հետ հաշվետվության ներկայացում՝ վերականգնման աշխատանքների, (այդ թվում՝ ծածկված աշխատանքների) թվային լուսանկարների, կատարված աշխատանքների սխեմատիկ գծապատկերների ներառմամբ՝ ըստ սահմանված կարգի և լիազորությունների:
- Արտահերթ ստուգումների կատարում՝ Պատվիրատուի պահանջով:
- Տեխնիկական հսկողության ծառայությունները պետք է իրականացվեն ՀՀ Քաղաքաշինության նախարարի 28.04.1998թ.-ի N 44 հրամանով հաստատված

| |
|---|
| շինարարության որակի տեխնիկական հսկողության իրականացման իրահանգով և Պատվիրատուի կողմից տրամադրվող պարտականությունների շրջանակներում: |

* *ծառայության մատուցման վերջնաժամկետը չի կարող ավել լինել, քան տվյալ տարվա դեկտեմբերի 1-ը:*

| **ՊԱՏՎԻՐԱՏՈՒ** | **ԿԱՏԱՐՈՂ** |
|---|---|
| ----------Վ. Գասպարյան | ----------Ե. Վարդանյան |
| /ստորագրություն/ | /ստորագրություն/ |
| Կ.Տ | Կ.Տ |

**Հավելված N 2**
« 22 » 04 2021 թ. կնքված
ՀՀԿԳՄՍՆԳՀԾՁԲ-20/160-Հ1 ծածկագրով համաձայնագրի

**ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ**

ՀՀ դրամ

| Ծառայության | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| հրավերով նախատեսված չափաբաժնի համարը | գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | անվանումը | դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել | | | | | | | | | |
| | | | 2021թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում* | | | | | | | | | Ընդամենը |
| | | | ապրիլ | մայիս | հունիս | հուլիս | օգոստոս | սեպտեմբեր | հոկտեմբեր | նոյեմբեր | դեկտեմբեր (մինչև 30-ը) | |
| 1 | 71351540-4 | Տեխնիկական հսկողության ծառայություններ | 17738 | 17738 | 17738 | 62084 | 62084 | 62084 | 88692 | 88692 | 88692 | **88692** |

*Վճարման ենթակա գումարները ներկայացվում են աճողական կարգով:

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**

---------------Վ. Գասպարյան
/ստորագրություն/
Կ.Տ

**ԿԱՏԱՐՈՂ**

---------------Ե. Վարդանյան
/ստորագրություն/
Կ.Տ